

նամակներէն (Գիւ. Անտ.) կը քաղեմ հե-
 տուեալ անդեկութիւնները: Մեր այս Պրու-
 սայի Առաջնորդ Սամուէլ Եպ. Երզնկացոյ
 մականունն է Լաճեան, եւ բոլորովին սխալ
 է Ուղուրիան վ.ի աւանդածն՝ թէ Լաճեան
 Եպս. 1773ին ի Հոռոմ վախճանած ըլլայ. վասն
 զի Սարգիս վ. Թէքիրտաղցի, տակաւին սարկա-
 ւաւագ եւ աշակերտ Գպրատան, 20 Ապր.
 Ն. տ. 1776ին Հոռոմէն կը գրէ «առ Սամուէլ
 Լաճեան Եպ. Պրուսայի ի Պրուսայ», դարձեալ
 20 Մայիս հ. տ. 1776ին «առ Գումրուեան
 Իսահակ Սարկաւագ Սամուէլ Եպս.ի Պրու-
 սայու ի Պրուսայ» (այս սարկաւագն էր, որ
 Սամուէլի հետ Հոռոմ գացած էր), եւ վերջա-
 պէս նոյն տարւոյ Յունիսին «առ Սամուէլ Եպ.
 ի Պրուսայ»: Սարգիս Պոլիս դառնալէն ետեւ
 գրած նամակներուն մէջ ալ, ինչպէս նաեւ իր
 ինքնակենսագրութեան մէջ կը յիշատակէ Սա-
 մուէլ Եպ.ը: Ասոնցմէ կ'իմանանք, որ Սամուէլ
 վ. Լաճեան, Երզնկացի, Եպ. Պրուսայի, 1775ի
 վերջերը կամ 1776ի սկիզբը իր կահակարասիքը
 Հոռոմ Հայոց Եկեղեցւոյն շնորհելով՝ Պոլիս
 դարձած է իր սարկաւագին հետ, եւ դարձեալ
 իր թեմը գացած. իսկ 1782—3ին Խասգիւղ
 հաստատուած է: Սամուէլ Պրուսայէն 150 զր.
 փոխ կը ղրկէ Սարգսին վենետիկի Յովհաննէս
 Սերբուսեան Մարքիզին ձեռօք. Սարգիս ալ
 Հոռոմէն անդեկութիւններ կու տայ Սամուէլին,
 եւ Իսահակ սարկաւագին խրատ կու տայ հաս-
 տատուն մնալու հաւատքին մէջ: Սամուէլ դար-